Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր (ՈՀԱԾ)

## ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
## (ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

**«Արաքս, Արմավիր, Մերձափնյա, Մասիս, Ազատ, Արտաշատ, Վեդի, Արարատ, Մուսալեռ, Վաղարշապատ, Խոյ, Ակնալիճ, Սևջուր-Ախթամար, Շենիկ, Քասախ, Աշտարակ, Փարպի, Ամբերդ, Շամիրամ, Թալին, Գառնի-Գեղարդ, Ջրվեժ-Ձորաղբյուր, Նաիրի, Եղվարդ, Հրազդան-ջուր, Մարտունի և Մեղրի ՋՕԸ-ների սպասարկման տարածքների ներտնտեսային ոռոգման համակարգերի շինարարության/վերականգնման տեխնիկական վերահսկողություն» ISMP/QCBS/SW–19/001**

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամից (Հակաճգնաժամային հիմնադրամ)՝ Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագրի ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար:

Խորհրդատվական ծառայությունների («Ծառայություններ») նպատակն է՝ իրականացնել Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի 105 համայնքների ներտնտեսային ոռոգման համակարգերի (երրորդ կարգի ջրանցքների) վերականգնման/ վերակառուցման տեխնիկական վերահսկողություն և որակի հսկում: Վերականգնվելու են 27 ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ-ներ) սպասարկման տարածքում գտնվող ներտնտեսային ոռոգման համակարգերի խիստ վթարային և վթարային հատվածները՝ 259.3 կմ ընդհանուր երկարությամբ:

Խորհրդատուն պատասխանատու է նաև ապահովելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական երաշխիքային քաղաքականություններին, ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակներին (ԲՍԿՇ), Բնապահպանական և սոցիալական ստուգաթերթին (IR Checklist) և նրանում ներառված Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին (ԲՍԿՊ) ու «Մոնիտորինգի պլանին» (ՄՊ), Վերաբնակեցման քաղաքականության շրջանակին, եթե ծրագրի շինարարության փուլում կիրառելի է:

Ներտնտեսային ոռոգման համակարգերի շինարարությունը/վերականգնումը նախատեսված է իրականացնել 3 շինարարական փաթեթներով.

**Փաթեթ** 1. "Արաքս, Մերձափնյա, Արմավիր, Մուսալեռ, Վաղարշապատ, Խոյ և Մեղրի ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում" (միջազգային մրցույթ, Ref#ISMP/ICB/CW-19/001): **Փաթեթ** 1 ջրանցքների վերականգնումը նախատեսված է իրականացնել հետևյալ 2 շինարարական լոտերով.

**Լոտ** 1. Արմավիրի մարզի 12 գյուղերի 21.6կմ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում: Համակարգերը գտնվում են Արաքսի, Մերձափնյայի և Արմավիրի ՋՕԸ-ների սպասարկման տարածքում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-80 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 1847մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-60 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 8767մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-40 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 10591մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D400մմ, երկարությունը՝ 428մ:.

**Լոտ 2**. Արմավիրի մարզի 15 գյուղերի 49.5կմ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում: Համակարգերը գտնվում են Մուսալեռի, Վաղարշապատի, Խոյի և Մեղրիի ՋՕԸ-ների սպասարկման տարածքում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-80 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 4183մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-60 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 3076մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-40 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 24674մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D920մմ, երկարությունը՝ 58մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D426մմ, երկարությունը՝ 508մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D325մմ, երկարությունը՝ 320մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D270մմ, երկարությունը՝ 1380մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D219մմ, երկարությունը՝ 227մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D159մմ, երկարությունը՝ 7907մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D100մմ, երկարությունը՝ 5973մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D76մմ, երկարությունը՝ 643մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D180մմ, երկարությունը՝ 365մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D125մմ, երկարությունը՝ 137մ.

**Փաթեթ 2**. "Արտաշատ, Վեդի, Արարատ, Գառնի-Գեղարդ, Ջրվեժ-Ձորաղբյուր, Նաիրի, Եղվարդ, Հրազդան-Ջուր և Մարտունի ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում" (միջազգային մրցույթ, Ref#ISMP/ICB/CW-19/002): Փաթեթ 2 ջրանցքների վերականգնումը նախատեսված է իրականացնել հետևյալ 2 շինարարական լոտերով.

**Լոտ 1**. Արարատի մարզի 18 գյուղերի 39.2կմ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում: Համակարգերը գտնվում են Արտաշատի, Վեդիի և Արարատի ՋՕԸ-ների սպասարկման տարածքում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-80 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 1050մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-60 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 3070մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-40 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 32311մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D530մմ, երկարությունը՝ 880մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D315մմ, երկարությունը՝ 1400մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D280մմ, երկարությունը՝ 506մ.

**Լոտ 2**. Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի 18 գյուղերի 51,5կմ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում: Համակարգերը գտնվում են Գառնի-Գեղարդի, Ջրվեժ-Ձորաղբյուրի, Նաիրիի, Եղվարդի, Հրազդան-ջրի և Մարտունիի ՋՕԸ-ների սպասարկման տարածքում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ✓ սեղանաձև կտրվածքով ջրանցքի վերականգնում մոնոլիթային բետոնով, ընդհանուր երկարությունը՝ 2818մ.
- ✓ ուղղանկյունաձևի կտրվածքով ջրանցքի վերականգնում մոնոլիթային բետոնով, ընդհանուր երկարությունը՝ 1945մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-60 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 3096մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-40 վաքերով, ընդհանուր երկարությունը՝ 11311մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D426մմ, երկարությունը՝ 2600մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D325մմ, երկարությունը՝ 1335մ.

- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D219մմ, երկարությունը` 3947մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D159մմ, երկարությունը` 4902մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D125մմ, երկարությունը` 1534մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D400-315մմ, երկարությունը` 7728մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D160-250մմ, երկարությունը` 6819մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D80-140մմ, երկարությունը 3443մ:

**Փաթեթ 3**. "Մասիս, Ազատ, Ակնալիճ, Մեջուր-Ախթամար, Շենիկ, Քասախ, Աշտարակ, Փարփի, Համբերդ, Շամիրամ և Թալին ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում" (միջազգային մրցույթ, Ref#ISMP/ICB/CW-19/003): Փաթեթ 3 ջրանցքների վերականգնումը նախատեսված է իրականացնել հետևյալ 2 շինարարական լոտերով.

**Լոտ 1**. Արարատի մարզի 13 գյուղերի 38,7կմ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում: Համակարգերը գտնվում են Մասիսի և Ազատի ՋՕԸ-ների սպասարկման տարածքում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները`

- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-80 վաքերով, ընդհանուր երկարությունը` 1133մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-60 վաքերով, ընդհանուր երկարությունը` 5942մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-40 վաքերով, ընդհանուր երկարությունը` 29063մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D530մմ, երկարությունը` 53մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D426մմ, երկարությունը` 2025մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D200մմ, երկարությունը` 493մ:

**Լոտ 2**. Արմավիրի մարզի 27 գյուղերի 58,6կմ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում: Համակարգերը գտնվում են Ակնալճի, Մեջուր-Ախթամարի, Շենիկի, Քասախի, Աշտարակի, Փարփիի, Արերդի, Շամիրամի և Թալինի ՋՕԸ-ների սպասարկման տարածքում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները`

- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-60 վաքերով, ընդհանուր երկարությունը` 1358մ.
- ✓ ջրանցքների կառուցում հավաքովի երկաթբետոնային ЛР-40 վաքերով, ընդհանուր երկարությունը` 33497մ.
- ✓ ջրանցքի վերականգնում հավաքովի երկաթբետոնային Г-15 բլոկներով (Г-15 բլոկների փոխարինում` 241 հատ) , ընդհանուր երկարությունը` 2783մ.
- ✓ սեղանաձև կտրվածքով ջրանցքի վերականգնում մոնոլիթային բետոնով, ընդհանուր երկարությունը` 2043մ.
- ✓ ջրանցքի վերականգնում մոնոլիթային բետոնով հատակի կառուցման միջոցով, ընդհանուր երկարությունը` 1431մ.
- ✓ ջրանցքի հողային հունի վերականգնում, երկարությունը` 1237մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D1200մմ, երկարությունը` 60մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D530մմ, երկարությունը` 402մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D426մմ, երկարությունը` 408մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D377մմ, երկարությունը` 180մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D325մմ, երկարությունը` 1020մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D273մմ, Երկարությունը 504մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D219մմ, երկարությունը` 2197մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D150մմ, երկարությունը` 674մ.
- ✓ խողովակաշարի կառուցում պողպատյա խողովակներից, D100մմ, երկարությունը` 2239մ.

- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D350-40, երկարությունը՝ 2412մ․․
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D160-280մմ, երկարությունը՝ 3020մ․
- ✓ խողովակաշարի կառուցում պոլիէթիլենային խողովակներից, D110-125մմ, երկարությունը՝ 3177մ։

Յուրաքանչյուր փաթեթի տևողությունը 17 օրացույցային ամիս է, ներառյալ վեցետացիոն ժամանակահատվածը։ (Ծանոթություն՝ վեցետացիոն ժամանակաշրջանի ընթացքում, երբ շինարարական աշխատանքների իրականացումը հնարավոր չի լինի, կապալառուի հետ կկնքվի տեխնոլոգիական ընդմիջում)։

Ակնկալվում է, որ խորհրդատվական ծառայությունները կսկսվեն 2020թ. փետրվարին։

Սույնով «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը («Պատվիրատու») հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար։ Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ (բրոշյուրներ, նմանատիպ աշխատանքների նկարագրություններ, փորձ համանման պայմաններում, աշխատանքն իրականացնելու համար տեխնիկական ռեսուրսների մատչելիություն, հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորումներն ու թիվը (CV-ներ չեն պահանջվում) և այլն), որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ՝ ծառայությունները կատարելու համար։

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են՝

- (i) ընկերության ընդհանուր փորձը (գործունեության հիմնական տեսակը և փորձը տարիներով).
- (ii) hանձնարարության ոլորտում ընկերության փորձը (փորձը ոլորտում (տարիներ) և վերջին 10 տարիների ընթացքում իրականացրած համանման աշխատանքների թիվը).
- (iii) ընկերության տեխնիկական և կառավարչական կարողությունները (կառավարչական և կազմակերպական կառուցվածք, գրասենյակային սարքավորումներ և այլն).
- (iv) ընկերության փորձը տարածաշրջանում (Հայաստան/ԱՊՀ երկրներ)։

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, վերանայված 2014թ հուլիսին», 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով։

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության (ՀՁ) կամ ենթախորհրդատվության ձևով իրենց որակավորումները ուժեղացնելու նպատակով (անհրաժեշտ է հստակ նշել միավորման կարգավիճակը, օրինակ՝ «Համատ»ղ ձեռնարկում» (ՀՁ) կամ «Ենթախորհրդատու»)։ Համատեղ ձեռնարկության դեպքում պահանջվում է կցել (i) լիազորագիր յուրաքանչյուր անդամի կողմից ներկայացուցիչ նշանակելու համար, (ii) լիազորագիր առաջատար անդամի ներկայացուցչի անունով՝ բոլոր անդամների անունից հանդես գալու համար, և (iii) ՀՁ կազմելու «Մտադրության նամակը» կամ գոյություն ունեցող համաձայնագրի պատճենը։ Պայմանագրի շնորհման դեպքում բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում Պատվիրատուի առջև Պայմանագրի բոլոր պարտավորությունների համար։

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է «Որակի և արժեքի հիման վրա ընտրության» մեթոդով (QCBS), որը սահմանվում է Խորհրդատուների Ուղեցույցներում՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, վերանայված 2014թ հուլիսին» և ԿԶԵՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների քաղաքականության համաձայն։

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ ժ.10:00–17:00 (Երևանի ժամանակով), երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ, բացի պաշտոնական տոներից:

Շահագրգռվածության հայտը պետք է ներկայացվի անձամբ անգլերեն կամ հայերեն լեզվով գրավոր՝ մեկ (1) վավերացված տպված օրինակով կամ էլ. փոստով՝ Adobe PDF ձևաչափով ստորև նշված հասցեով՝ **2019թ. սեպտեմբերի** 16-ից ոչ ուշ և պետք է հստակ նշվի որպես՝ «Շահագրգռվածություն հայտնելու հայտ "Արաքս, Արմավիր, Մերձավանյա, Մասիս, Ազատ, Արտաշատ, Վեդի, Արարատ, Մուսալեռ, Վաղարշապատ, Խոյ, Ակնալիճ, Սևջուր-Ախթամար, Ծենիկ, Քասախ, Աշտարակ, Փարպի, Ամբերդ, Շամիրամ, Թալին, Գառնի-Գեղարդ, Ջրվեժ-Ձորաղբյուր, Նաիրի, Եղվարդ, Հրազդան-ջուր, Մարտունի և Մեղրի ՋՕԸ-ների սպասարկման տարածքների ներտնտեսային ոռոգման համակարգերի շինարարության/վերականգնման տեխնիկական վերահսկողություն" ISMP/QCBS/SW–19/001»:

Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ
Պրն. Վահրամ Մկրտչյան, տնօրենի պաշտոնակատար
Պրն. Մարտին Չարյան, գնումների համակարգող
ՀՀ, Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, 5-րդ հարկ
Հեռ՝ (+37410) 52-25-50 (ընդունարան), 56-03-62 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ vahram.mkrtchyan@wsdp.am; mcharyan@wsdp.am
www.piu.am